Եթե Դուք արդեն օգտվում եք Անսահմանափակ 3-ը 1-ում տարբերակից, ապա կշարունակեք օգտվել այդ տարբերակից քանի դեռ չեք ապաակտիվացրել այն, կամ անցում կատարել այլ սակագնային պլանի, որին այն հասանելի չէ:
Անսահմանափակ 3-ը 1-ում տարբերակը Ձեզ հնարավորություն է տալիս վճարել մեկ անգամ և վայելել միաժամանակ անսահմանափակ զանգեր և SMS-ներ Ucom-ի շարժական հեռախոսակապի համարներին և անսահմանափակ օգտվել շարժական ինտերնետից:

Անսահմանափակ 3-ը 1-ում՝ 1 օր 150 դրամով
Ծառայությունն ամեն անգամ ավտոմատ կվերաակտիվացվի 24 ժամն ավարտվելուց հետո, և Ձեր հաշվից կգանձվի 150 դրամ:

Անսահմանափակ 3-ը 1-ում՝ 7 օր 700 դրամով
Ծառայությունն ամեն անգամ ավտոմատ կվերաակտիվացվի 7 օրն ավարտվելուց հետո, և Ձեր հաշվից կգանձվի 700 դրամ:

Անսահմանափակ 3-ը 1-ում տարբերակի դեպքում ինտերնետի ներբեռնման և վերբեռնման արագությունը մինչև 512 կբ/վ է:
Բարեխիղճ օգտագործման սկզբունքից ելնելով՝ Դուք օրական 500 SMS-հաղորդագրությունից ավել չեք կարող ուղարկել: Այս դեպքում 500 SMS-ի հաշվարկը կկատարվի յուրաքանչյուր օրվա ժամը 00:00-ից մինչև ժամը 24:00:
Տարբերակի վերաակտիվացումը կսկսվի ակտիվ տարբերակի ժամկետի ավարտից 10 րոպե առաջ: Նախքան տարբերակի վերաակտիվացման սկիզբը, Ձեր հաշվին պետք է լինի բավարար գումար տարբերակի վերաակտիվացման համար: Այդ ընթացքում Դուք չեք կարող փոխել կամ ապաակտիվացնել Ձեր ընթացիկ անսահմանափակ տարբերակը: Լրացուցիչ ծառայությունները/փաթեթները ակտիվանում են ակտիվացումը հաստատող SMS հաղորդագրությունը/ծանուցումը ստանալուց հետո:
Հաշվեկշռին բավարար գումար չլինելու, ինչպես նաև հեռախոսահամարի պասիվ շրջան անցնելու դեպքում ծառայությունը պարզապես կդադարի գործել և ավտոմատ կվերաակտիվացվի հաշիվը լիցքավորելու դեպքում՝ պայմանով, որ վերաակտիվացումից հետո Ձեր հաշվին մնա առնվազն 50 դրամ: Հակառակ դեպքում ավտոմատ վերաակտիվացում չի կատարվի:
Այս տարբերակի ավտոմատ վերաակտիվացումը կարող եք ցանկացած պահի դադարեցնել՝ հավաքելով *129*20#OK: Տարբերակի վերաակտիվացումը դադարեցնելուց հետո, Դուք այլևս հնարավորություն չեք ունենա կրկին ակտիվացնել այն, քանի որ այս տարբերակը դադարել է գործել: